

Այս համարում

Հայերեն բաժին

- 1- Արդյոք անհրաժեշտ է համայնքային Ֆուտբոլի խումբ ունենալ.....1
- 2- Լուրեր – Իրանահայ համայնք2
- 3- Լուրեր – Հայաստան.....5
- 4- Լուրեր – Իրան.....8
- 5- Խոհեր9
- 6- Մշակույթ10

Պարսկերեն բաժին

- 1- Լուրեր- Իրանահայ համայնք1
- 2- Լուրեր-Իրան,Հայաստան.....2



Ճապիկի առաջին էջում՝

Ազադի հրապարակ- Թեհրան

Ճապիկի վերջին էջում՝

Իրան-Հայաստան Բարեկամության Միություն



Համար 149, Մարտ 2009թ.

No. 149, March 2009

ماهنامه لویس - شماره ۱۴۹ اسفند ماه ۱۳۸۷

Արդյոք անհրաժեշտ է համայնքային Ֆուտբոլի խումբ ունենալ

Իրանահայ համայնքը միշտ ունեցել է իր համայնքային Ֆուտբոլի հավաքականը՝ «Արարատ» Ֆուտբոլային խումբը, որը, բացի մի կարճ ժամանակահատվածից, միշտ եղել է երկրի առաջին լիգայում: Այն հոգևոր ու բարոյական մեծ արժեք է ներկայացրել իրանահայ համայնքում և Իրանում, իր դրական ազդեցությունն է թողել իրանահայ համայնքի կյանքում: Սակայն բազմաթիվ նյութական և ոչ նյութական դժվարությունների պատճառով արդեն ավելի քան մեկ տարի է դադարեցվել են «Արարատ» Ֆուտբոլային խմբի աշխատանքները: Սակայն Ֆուտբոլասերների, մարզիչների ու մի շարք սրտցավ ազգայինների կողմից դեռ չի դադարեցվել այս հարցի քննարկումը և հույս են փայփայում վերականգնելու խմբի գոյությունը:

Թեհրանում կա հայկական երկու Ֆուտբոլային դաշտ՝ «Արարատ»-ը և «Րաֆֆի»-ն: «Րաֆֆի» համալիրի Ֆուտբոլային խումբը աշխույժ է, սակայն մինչև որոշ աստիճանի կարող է այն զարգանալ և հնարավորությունների բացակայության պատճառով չի կարող վերածել ու մինչև երկրի առաջին լիգային մասնակցելու մղումով առաջ գնալ: Մի դժվարություն, որին հանդիպել է նաև «Արարատ» կազմակերպությունը:

Կարծում ենք այս հարցը առաջին հերթին պետք է լինի Թեհրանի բոլոր հայկական միությունների քննարկվելիք հարց, պետք է մի ուսումնասիրող հանձնախումբ կյանքի կոչվի բոլոր միություններից բաղկացած և Թեմական հստիքի մասնակցությամբ ու օժանդակությամբ, որը ուսումնասիրությունները կատարելուց հետո իր եզրակացությունը կներկայացնի համայնքին ու մի վերջնական որոշում կնդրունվի: Մեծ հավանականությամբ համայնքային հավաքականը պետք է բաղկացած լինի բոլոր հայկական միությունների Ֆուտբոլիստներից, որևէ անվանում կրի կամ պահպանի հենց «Արարատ» անվանումը: Իհարկե, այստեղ պետք է մեծ ուշադրություն դարձվի ՀՄՄ «Րաֆֆի» համալիրի կրտսերների Ֆուտբոլային խմբին, որտեղ հիմնականում ներկա պայմաններում դաստիարակվում են մեր ապագա հայ Ֆուտբոլիստները:

Չպետք է մոռանանք, որ Իսֆահանում մեր հայկական «Սևան» Ֆուտբոլային խումբը այդ նահանգում ունի իր ինքնուրույն տեղը, սակայն բազում դժվարությունների պատճառով նրանք էլ դժվարանում են իրենց զարգացումը ապահովել:

Հույսով վեր դասելով միութենական խնդիրներից և համարելով, որ այս երևույթը բոլորիս հարցն է, կարողանանք որևէ եզրակացության գալ համայնքում և անհրաժեշտության դեպքում գործնական քայլերի անցնենք:



Վահրամ Բարսեղյան

Իրանահայ Համայնք

Իրանահայ Բժիշկների Միության հանդիպում

Հունվարի 16-ին ուրբաթ, երեկոյան ժամը 8-ին Իրանահայ Բժիշկների Միությունը (ԻԲՄ) հայոց ակունքում կազմակերպել էր ընթրիք երեկո-հանդիպում, որտեղ մասնակցում էին հիմնականում Թեհրանի մի խումբ բժիշկներ: Այս հանդիպումը կազմակերպել էր ԻԲՄ վարչությունը ամանորի առթիվ:

Հանդիպման ընթացքում վարչության նախագահ դկտ. Շահգեղյանը, միութենականներին շնորհավորելով ամանորի առիթով, միության անունից ողջույնի ու գնահատանքի խոսք հղեց դկտ. պրոֆեսոր Հարմիկ Դավթյանին՝ միջազգային ասպարեզում իր ձեռք բերած հաջողությունների կապակցությամբ: Եղան խրախուսանքի խոսքեր ու ասունքներ: Նման հանդիպումները հարմար առիթ են հանդիսանում մի շարք հայ բժիշկների համար միմյանց հետ ծանոթանալու, մտերմություն ստեղծելու և երբեմն փոխհամագործակցության մտահղացումներ առաջանալու համար:

Հաջողություն ենք մաղթում ԻԲՄ վարչությանը:

ԻՐԱՆԱՀԱՅ ՌԵԺԻՍՈՐԻ ՆԿԱՐԱՀԱՆԱԾ ՖԻԼՄԸ ԻՐԱՆՈՒՄ ՏԱՐԿԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՖԻԼՄ ՃԱՆԱԳՎԵՑ

Իրանի մայրաքաղաք Թեհրանում անցած շաբաթ անկցկացվեց «Բյուրեղյա Սիմորդ» ամենամյա փառատոնը: Փառատոնի ժյուրին լավագույն Ֆիլմ ճանաչեց իրանահայ ռեժիսոր Վարուժ Քարին Մասիհիի նկարահանած «Կասկած» Ֆիլմը: հաղթողին շնորհվեցին «Բյուրեղյա Սիմորդ» մրցանակը եւ «Մինիաթյուր» մակնիշի ավտոմեքենա:

1990 թ. տեղի ունեցած «Բյուրեղյա Սիմորդ» փառատոնի ժամանակ Վարուժ Քարին Մասիհիի նկարահանած «Վերջին արար» Ֆիլմը նույնպես ժյուրիի կողմից արժանացավ տասնչորս մրցանակի, այդ թվում նաեւ լավագույն ռեժիսորի մրցանակի:

Վարուժ Քարին Մասիհին իրանական կինո է մուտք գործել 1972 թ. եւ երկու տարի առաջ երեւանում կայացած «Ոսկե ծիրան» փառատոնի ժամանակ եղել է ժյուրիի կազմում:

Թեհրանի հայկական միությունների հանդիպումը Թեմական Խորհրդի հետ

2009 թվականի հունվարի 26-ին Թեհրանի Հայոց Թեմի Թեմական Խորհրդի հրավերով ազգային առաջնորդարանի դահլիճում տեղի ունեցավ հանդիպում միությունների ներկայացուցիչների ու Թեմական Խորհրդի անդամների միջև: ԹԽ-ն ցանկություն էր հայտնել, որ 2009 թվականի գործունեության շարունակում հանդիպի և խորհրդակցի թեմիս մարզամշակութային միությունների հետ և տարին սկսի միասնականության ոգով: Հանդիպման սկզբում ԹԽ-ի նախագահ դկտ. Այիդա Հովհաննիսյանը տեղեկություններ փոխանցեց ԹԽ-ի մոտեցումների ու մտահղացումների մասին Թեհրանի հայկական միությունների կապակցությամբ: Հանդիպմանը մասնակցում էին շուրջ 25 հոգի և ներկա

էին ԹԽ-ի չորս անդամներ: Միությունների ներկայացուցիչները արծարծեցին հետևյալ խնդիրները՝

1- «Սարդարապատ» Միության շենքի օգտագործման իրավունքի (փայան քար)-ի կապակցությամբ մտահոգություն հայտնեց և դկտ. Այիդա Հովհաննիսյանը հույս հայտնեց, որ դա շուտով կլուծվի:

2- «Արիեստավորների» Միության ներկայացուցիչը իրենց կենտրոնատեղիի վաճառքի կապակցությամբ մտահոգությունը հայտնելով Թեմական Խորհրդին՝ իր ակնկալիքը հայտնեց միության աշխատանքները շարունակելու համար որևէ տեղ հատկացնելու մասին: Ինչպես գիտենք «Արամ» սրահը տրամադրված է եղել «Արիեստավորների» միությանը: Առաջարկներ եղան նաև, որ որոշ միություններ կարող են համատեղ աշխատանքներ տանել կամ իրենց հնարավորություններից իրավունք տան, որ օգտվեն նաև մյուս միությունները: ԹԽ-ի նախագահ դկտ. Այիդա Հովհաննիսյանը նշեց, որ որևէ միության գոյությունը պայմանավորված չէ իր վայրով, այլ դա պայմանավորված է իր անդամներով, և իրենց կողմից անպայման որևէ տեղ կամ կալված կտրամադրվի «Արիեստավորների» միությանը:

3- «Սիփան» ՄՄ Միության ներկայացուցիչ պրն. Վաչիկ Ղազարյանը, անդրադառնալով միության դժվարություններին, նշեց, որ միության շինարարության դժվարությունների հետևանքով միության աշխատանքները, հատկապես մարզական բնագավառում դժվար են առաջ գնում, թեև մյուս բաժիններում էլ ունեն դժվարություններ, սակայն շինարարության բյուջեի պակաս լինելու հետևանքով տուժում են միության աշխատանքները: Միության ակնկալիքն է Թեմական Խորհրդից, որ պառտքով կամ այլ ձևերով գումար հատկացնի միությանը շինարարական աշխատանքները ավարտելու նպատակով: Նա նշեց, որ ներկա պայմաններում միությունը իր կարողության և միութենական աշխատանքների 20-30 տոկոսն է օգտագործում: Թեմական Խորհրդից պրն. Հարմիկ Մարգարյանը ի պատասխան նշեց, որ «Սիփան» միությունը երկու տարի առաջ նյութական օժանդակության համար դիմում է ներկայացրել ԹԽ-ին և ինչքան, որ պահանջ է ներկայացվել, ԹԽ-ն նյութական օժանդակություն է ցուցաբերել և բավարարել է պահանջը, սակայն հետագայում միությունը գետնափորի սրահ կառուցելու հարցը, որ ծրագրի մեջ չի եղել, առաջ է քաշել և դժվարության է հանդիպել, ուրեմն ըստ պրն. Մարգարյանի ներկայացված պահանջի, գումարը վճարվել է, և, բացի դա, վերջերս պետության կողմից խոստումներ կամ հատկացումներ պետք է կատարվեն միությանը, որից տեղյակ չի պահել միությունը և չի էլ խորհրդակցել և ԹԽ-ն տեղյակ չի այդ հարցերից և նշեց, որ միությունը պետք է զրավոր տեղեկություններ փոխանցի, որպեսզի իրենք էլ կարողանան կողմնորոշվել:

Թեհրանի գորողների միության կողմից բանաստեղծ պրն. Վարանդը միության գրանցվելու հարցը առաջ քաշեց և դկտ. Ա. Հովհաննիսյանը ասաց, որ ընդհանրապես արհմիութենական միություններին դժվար են գրանցում: Պրն. Վարանդը նաև շեշտեց, որ գորողների միությունը մասնագիտական միություն է և չի կարող բազմանդամ լինել, ուրեմն՝ անսավճարներից ստացած գումարը շատ չնչին է և ավելի լավ կլինի, երբ գումարների հատկացումներ է լինում, նաև իրենց միությանը նկատի ունենան: Ի պատասխան դկտ. Այիդա

Յո՞վհանճիսյանը ասաց, որ դեռ չգիտեն, թե այս տարի պետական հատկացումների ձևը ինչպիսին է լինելու: Ասաց, որ ամեն տարի մշակութային աշխատանքների համար թիւ-ն սահմանափակ գումար է հատկացնում, սակայն մյուս աշխատանքների համար հատուկ բյուջե չկա:

ՀՄՍ «ՐաՖՖի» Համալիրի կողմից դկտ. Ռայմոնդ Թորոսյանը Հայաստանի համահայկական բասկետբոլի մարզաձևին մասնակցելու կապակցությամբ հետաքրքրվեց: Այդ կապակցությամբ թիւ-ից պրն Հարմիկ Սարգսյանը ասաց, որ նկատի է առնվել, որ երկու բասկետբոլի խումբ համայնքից կմասնակցի տղայոց և օրիորդաց, որ կյանքի է կոչվել մի մարմին, որը կորոշի կամ կընտրի այդ խմբերի մասնակիցներին տարբեր միություններից:

«Չարմահալ» ՄՍ միությունից պրն Եսայի Արահամյանը, միութենական աշխատանքներ տանելու համար փող պահանջելը թիւ-ից ճիշտ չհամարելով, այն կարծիքին էր, որ մի շարք փոքր մասնագիտական միություններ կարող են համախմբվել Հայ Համալսարանական միությունում և այդ միության մաս կազմել: Նա ասաց, որ իրենք տեղյակ չեն միությունների աշխատանքներից:

Թեհրանի Ձեթուն կամ Մաջիդիե թաղամասի հայ «Աշխարհատեսներ» կենտրոնի նախագահ տիկ. Արդա Գրիգորյանը, համառոտ տեղեկություններ փոխանցելով իրենց կենտրոնի մասին, նշեց, որ բազմաճյուղ է իրենց միությունը, իսկ վայրը շատ փոքր է աշխատանքների համար և խնդրեց, որ, եթե թաղում որևէ տեղի հնարավորություն է լինում, նկատի ունենան նաև իրենց: Դկտ. Այիդա Յո՞վհանճիսյանը ասաց, որ թիւ-ն շատ վայրեր չունի և իրենց հնարավորությունները սահմանափակ են:

Իրան-Հայաստան Բարեկամության միության կողմից դկտ. Ռուբիկ Սարգսյանը նշեց, որ անցյալում էլ նման հանդիպումներ եղել են և թիւ-ն արտահայտել է իր մտահոգությունները և ցանկացել է միասնական աշխատանքներ տանել, եղել են բազմաթիվ գրավոր առաջարկներ, հիմա էլ նոր առաջարկներ են լինում, առաջարկեց, որ բոլոր առաջարկներն ու մտքերը հաշվի առնելով թիւ-ն ինքը նախաձեռնի կամ էլ իր կողմից կյանքի կոչված մի հանձնախմբի հանձնարարի, որ մի պլատֆորմ կամ ծրագիր կազմվի և հաջորդ հանդիմանը, որպես թիւ-ի առաջարկ, ներկայացնի բոլոր միություններին, որպեսզի գործնականում մի բան ստացվի:

Առաջարկներ եղան նաև այն մասին, որ միությունները իրենց աշխատանքներից միմյանց տեղյակ պահելով համագործակցեն միմյանց հետ: Օրինակ, երբ մի դասախոս է հրավիրվում դրսից, կարելի է միությունները համագործակցեն և միայն մի միությունում նա ելույթ չունենա, այլ տարբեր միություններում և այլն:

Հայոց ակումբի վարչության նախագահ պրն. Արշավիր Քեշիշյանը նշեց, որ հայոց ակումբի հնարավորությունները անվճար ձևով բոլոր դպրոցների աշակերտության տրամադրության տակ են և նրանք կարող են իրենց ձեռնարկների համար օգտվել մեր հնարավորություններից, ավելացրեց, որ իրենք պատրաստ են համագործակցելու բոլոր միությունների հետ:

Վերջում թիւ-ն տեղեկացրեց, որ արդեն նշանակել է Ապրիլի 24-ի հանձնախումբը և խնդրեց բոլոր միություններին համագործակցել տվյալ հանձնախմբի հետ և առաջարկեց, որ բոլոր միությունները այդ

կապակցությամբ տեղյակ պահեն իրենց միջոցառումների մասին և խորհուրդ տրվեց ինչքան հնարավոր է միասնական աշխատանքներ կազմակերպել այդ կապակցությամբ:

14-րդ շրջանի ԹԸԹ-ի ՊԺ-ի երկրորդ նիստը

2009 թվականի փետրվարի 3-ին Ազգային Առաջնորդարանի դահլիճում տեղի ունեցավ նորընտիր 14-րդ Պատգամավորական ժողովի երկրորդ նիստը: 56 պատգամավորներից նիստին ներկա էին 44-ը, սակայն հետագայում պատգամավորների քանակը հասավ 52-ի:

Տեղումնական աղոթքից ու ներկայության ստուգումից հետո ընթերցվեց նախորդ անդրանիկ նիստի, արձանագրությունը, որից հետո եղան որոշ ճշտումներ: Ինչպես տեղյակ ենք, մեր թեմից մի խումբ պատգամավորներ մասնակցել էին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ազգային ժողովին. մասնակիցներից պատգամավոր Արա Շահնազարյանը այդ կապակցությամբ ներկայացրեց զեկույց, որտեղ մատնանշված էր, որ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Վեհափառը գտնում է, որ նոր պայմաններ են առաջացել ու նոր մարտահրավերների առջև ենք կանգնած և հին մեթոդներով հնարավոր չի լինի լուծելու մեր եկեղեցական և ազգային հարցերը, այդ իսկ պատճառով պետք է գտնենք նոր եղանակներ ու մեթոդներ: Ձեկուցողը անդրադարձավ մի շարք եկեղեցական ու աշխարհական ընտրություններին ու նշեց, որ մեր համայնքից դկտ. Լևոն Դավթյանը մեր թեմի ներկայացուցիչն է ազգային ժողովում, իսկ դկտ. Այիդա Յո՞վհանճիսյանը ընտրվել է ազգային ժողովի վարչության անդամ: Ձեկույցի մեջ մեծ տեղ էր տրված հայ դպրոցի դերին և առաջարկ էր հնչեցված, որ պետք է ունենալ համասփյուռքյան կրթական ծրագիր, ահազանգեր էին հնչեցված եկեղեցական կյանքի ու երիտասարդության մասին: Տեղեկագրեր ու բանաձևեր են պատրաստվել կամ կը պատրաստվեն և կտրամադրվեն համայնքներին կամ թեմերին, որտեղ ավելի գործնական քայլերի մասին տեղեկություններ պետք է հաղորդված լինի: Ձեկուցվեց մեր ազգի ու եկեղեցու համար համաշխարհայնացման վտանգի մասին և մտահոգություն էր արտահայտված, թե ինչպես պետք է դիմագրավել այդ երևույթին: Խոսվել էր Կիլիկիա-Հայաստան հարաբերությունների և գործնական քայլերի մասին. Օրագրվել է Հայաստանում «Կիլիկիա» անվամբ գյուղ կառուցել:

Հիշեցվեց, որ Ազգային ժողովը գումարվում է չորս տարին մեկ անգամ:

Ձեկույցի ընթերցումից հետո եղան մի շարք հարցումներ, որոնցից կարելի է հիշատակել հետևյալները՝

1- Արդյոք մեր պատվիրակությունը արժանի է մեր համայնքին վերաբերող մտահոգությունները և, եթե այո, ի՞նչ է զեկուցվել և ի՞նչ արդյունք է ունեցել:

Այս հարցի կապակցությամբ Սրբազան Հայրը նշեց, որ բոլոր թեմերը իրենց մասին մի տեղեկագիր էին պատրաստել և հանձնել ազգային ժողովին, սակայն ազգային ժողովն է որոշում օրակարգերը և այս անգամ հատուկ թեմերի թեմին վերաբերող օրակարգ չկար:

2- Արցախի, Հայոց ցեղասպանության և արտագաղթի նկատմամբ արդյոք դիրքորոշումներ եղա՞ն:

Սրբազան Հայրը պատասխանեց, որ դիրքորոշումները նույնն են մնացել և նոր մտահոգումներով հանձնառու ենք շարունակելու:

3- Գուլբենգյան Ֆոնդը արդյոք համագործակցում է Մեծի Ս. Կիլիկիո Կաթողիկոսության հետ:

Այս կապակցությամբ Սրբազան Հայրը ասաց, որ նրանք միշտ մեզ օժանդակել են և իրենց նպաստն են բերել տարբեր հարցերում, միայն, քանի որ այդ Ֆոնդը գտնվում է Պորտուգալիայում, որոշ սահմանափակումներ կան տվյալ իշխանության կողմից: Շուտով նշվելու է Գուլբենգյան Ֆոնդի 40 ամյակը և այստեղ Գուլբենգյան դպրոցն է աշխատում այդ ուղղությամբ: Օգնությունները հիմնականում երեք ուղղություններով են լինում՝ աշակերտական, կրոնական հրատարակությունների և շինարարական: Այդ Ֆոնդի տնօրենը հնարավոր է թեհրան այցելի և անպայման նրա հետ տարբեր հարցերի շուրջ քննարկումներ կլինեն:

4- Նշվեց վեհափառի երեք ուղենիշերի մասին՝ եկեղեցաշինություն, ազգաշինություն և հայրենաշինություն. արդյոք սա հիմնական քաղաքականությունն է Կիլիկիո Կաթողիկոսության:

Այս հարցի առթիվ Սրբազան հայրը ասաց, որ ավելի շուտ սա հոգևոր և բարոյական կողմերի մատնացույց է, որով առաջնորդվելու է Կիլիկիո Կաթողիկոսությունը:

5- Նշվեց, որ Կիլիկիո Կաթողիկոսությունը մտածում է համասփյուռքային կրթական համակարգ ստեղծելու մասին: Քանի որ Հայաստանի Հանրապետության Սփյուռքի նախարարությունը Երևանի Պետական Համալսարանի և Հայ Բարեգործական Ընկերության ջանքերի շնորհիվ արդեն իր ավարտին է հասցնում նման մի աշխատանք, որը նախատեսված է բոլոր հայ համայնքների համար՝ նկատի առնելով յուրաքանչյուրի առանձնահատկությունները, ազգային ժողովի այս մտածումը կամ ծրագիրը արդյոք չի խոչընդոտի կամ զուգահեռ աշխատանք չի՞ լինելու և արդյոք դրա անհրաժեշտությունը ներկայումս կա՞:

Այս հարցի կապակցությամբ Սրբազան Հայրը ասաց, որ երբ ազգայի ժողովը գումարվեց, դեռ Սփյուռքի նախարարությունը նման ծրագրի մասին հայտարարություն չէր տվել և հիմա, որ նման աշխատանք է տարվում, վստահ նկատի կառնվի և համադրություն կլինի:

6- Խոսվեց, որ ազգային ժողովը որոշել է Հայաստանում կառուցել «Կիլիկիա» անվան մի գյուղ, որտեղ հիմնական պարտականությունը դրված է Կիպրոսի թեմի վրա, սակայն բոլոր թեմերն էլ իրենց մասնակցությունը կունենան այդ գործում, ո՞րն է մեր թեմի մասնակցությունը:

Սրբազան Հայրը ասաց այդ հարցի բոլոր կողմերը ճշտելուց հետո մեզ կասեն, թե մեր թեմը այդ կապակցությամբ ինչ պետք է անի:

7- Ինչպես զեկույցից երևում է, ազգային ժողովում բավականին մտահոգությունների և ծրագրերի մասին խոսվել է, դրանց իրականացման համար ազգային ժողովը ի՞նչ մեխանիզմներ է որոշել:

Սրբազան Հայրն ասաց, որ տարբեր բանաձևեր ու առաջադրանքներ են պատրաստվելու և անպայման մեզ տեղյակ են պահելու այդ կապակցությամբ:

Թեմական Խորհուրդը ներկայացրեց իր ամփոփ զեկույցը, որտեղ ավելի շուտ նպատակ էր հետապնդում նորընտիր Պատգամավորական ժողովին տեղյակ պահելու նախկին ՊԺ-ի որոշումներից և իրենց ձեռնարկած կամ ապագայում ձեռնարկվելիք ծրագրերի շուրջ: Այս մասին որոշ տեղեկություններ կներկայացնենք «Լույս»-ի հաջորդ համարում:

ԻՍԼ.ՇՆՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԻ 30-ԱՄՅԱԿԻՆ ՆԿԻՐԿԱԾ ԵՐԵԿՈՒՅՑ

Մեծարվեցին կրոնական փոքրամասնությունները

1979թ. փետրվարին /1357թ. բահմանի 22/ Իրանի քաջարի ժողովուրդը պայքարեց ու հաղթեց և իր ազատությունը, անկախությունը տեսնում էր միայն ապրելով Իսլամական Հանրապետությունում: Այդ մեծ հաղթանակը դարձակետ հանդիսացավ Իրանի ժողովրդի ճակատագրում և սկիզբ դրեց համաշխարհային ազդեցությամբ մեծ մի իրադարձության:

2009թ. փետրվարին /1387թ. բահմանի 22/ ԻԻՀ-ն տոնում է իսլ. հեղափոխության հաղթանակի 30-ամյակը: Տոնում է մեծ շուքով և հպարտությամբ ու տարբեր առիթներով մեծարում կրոնական փոքրամասնությունների արժանավորներին:

Իսլ. հեղափոխության 30-ամյակին նվիրված երեկույթ կայացավ փետրվարի 8-ին Թեհրանի «Էսթեղլալ» հյուրանոցի «Դարիայե Նուր» դահլիճում իսլ. մշակույթի և առաջնորդության նախարարության նախաձեռնությամբ:

Հրավիրյալները Իրանում կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչներն էին /հրեա, ասորի գրադաշտ և հայ/: Ներկաները գեղարվեստական բաժնում ունկընդդեցին կրոնական փոքրամասնությունների երգչախմբին: Ելույթ ունեցան իսլ. մշակույթի և առաջնորդության նախարարի օգնական դկտ. Սոհսէն Փարվիզը, իսլ. դավանանքների մերձեցման ժողովի գլխավոր քարտուղար Այաթոլլահ Թասխիրին, իսլ. խորհրդարանում հրեա պատգամավորը, գրադաշտականների մոզապետը, Ղոմ քաղաքից կրոնագիտության համալսարանի տնօրենը, նախագահի օգնական և ազգային գրադարանի ու փաստաթղթերի կազմակերպության պետ Ալիաքբար Աշարին: Երեկույթի վերջին բաժնում ելույթ ունեցավ իսլ. մշակույթի ու ռաջնորդության նախարար Սաֆար Հարանդին : Նա իր ելույթի ընթացքում, անդրադառնալով Իրանում փոքրամասնությունների ու մուսուլմանների ամուր կապին, նշեց. Իսլ. հեղափոխության 30-ամյակին նվիրված երեկույթին նրանց խանդավառ մասնակցության մասին: Պրն. Հարանդին երկրի նախագահ Ահմադինեժադի շնորհավորանքը փոխանցեց հայերին, հրեաներին, ասորիներին և գրադաշտներին:

Վերջում մեծարվեցին կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչները մի քանիսը:

Պրն. Հարանդին պարզևներ հանձնեց Իրանահայ հոգեբուժ Հարմիկ Դավթյանին, Իրան-Հայաստան բարեկամության միության նախագահ Լևոն Ախարոնյանին, Իրաք-Իրան պարտադրյալ պատերազմի տարիներում ԹՀԹ ազգային իշխանության և իրանահայության գործունեության մասին գրքի հեղինակ՝ հանգուցյալ Իսկանդար Իսկանդարյանին (նշենք, որ գնահատագիրը հանձնվեց նրա որդուն Արտուշ Իսկանդարյանին), հրեաների հիվանդանոցի պատասխանատուին և իսլ. խորհրդարանի գրադաշտ պատգամավորին:

Ուժ ու կորով և երկար տարիների կյանք ցանկանանք մեր հայ ազգի Մեծ մարդկանց, նրանցով մենք միշտ հպարտ ենք և ասելու շատ բան կունենանք:

Թղթակից Ալվինա Բաղդասարյան

Իրանահայ միությունները տոնեցին ԻԻՀ հեղափոխության 30-րդ տարեդարձը

Արդեն 30 տարի է անցել այն ժամանակվանից, երբ Իրանի ողջ ժողովուրդը որքի կանգնելով տապալեց շահի ռեժիմը և հաստատվեց Իրանի Իսլամական Հանրապետությունը, որը այս 30 տարվա ընթացքում իր արձատներն է դրել և երկիրը զարգացրել է տարբեր բնագավառներում: Հեղափոխությանը մասնակից էին նաև իրանի հայերը, որոնք պարսիկ համաերկրացիների հետ միասին մասնակցեցին այս հանրապետության կառուցմանն ու զարգացմանը:

Իրանահայ մարզամշակութային միությունները յուրաքանչյուր տարի ունենում են հատուկ ծրագրեր նվիրված հեղափոխության տարեդարձին: Այս տարի ևս հայ մարզամշակութային միություններն ու ազգային առաջնորդարանը ավելի մեծ շուքով ու մեծ մասշտաբով նշեցին հեղափոխության 30-րդ տարեդարձը, եղան դասախոսություններ, ցուցահանդեսներ և գեղարվեստական ծրագրեր: Իրանի Իսլամական հեղափոխության 30-րդ տարեդարձի առթիվ «Լույս» ամսագիրը նույնպես իր հերթին շնորհավորում է Իրանի բոլոր պաշտոնյաներին ու ժողովրդին:

Շայաստան

ՕՂԱԿՆԵՐԻ ԱՐՔԱՆ 80 ՏԱՐԵԿԱՆ Է



Ալբերտ Ազարյանին հուզում է մարզաձեռի մասսայականության հարցը

Լրացավ օլիմպիական խաղերի եռակի չեմպիոն, աշխարհի, Եվրոպայի եւ ԽՍՀՄ առաջնությունների բազմակի չեմպիոն Ալբերտ Ազարյանի ծննդյան 80-ամյակը: Չնայած պատկառելի տարիքին, օղակների արքան շարունակում է իր ակտիվ մարզական գործունեությունը: Նա իր անունը կրող մարզական դպրոցի տնօրենն է: 1956-ին Մելքունի օլիմպիականում Ալբերտ Ազարյանը ոսկե 2 մեդալ նվաճեց. մեկը՝ ԽՍՀՄ հավաքականի կազմում թիմային հաղթանակի, մյուսը՝ օղակների վրա վարժությունում հաղթող ճանաչվելու համար: Չորս տարի անց Հռոմում կայացած օլիմպիական խաղերում նա կրկնեց հաջողությունը՝ կրկին լավագույնը ճանաչվելով օղակների վրա կատարած վարժությունում, թիմային պայքարում էլ

արժանացավ արծաթե մեդալի: Ավելորդ չէ հիշեցնել, որ անվանի մարմնամարզիկը Հայաստանի մարզական պատվիրակության դրոշակակիրն էր Պեկինի օլիմպիական խաղերի բացման արարողության ժամանակ:

«ՇԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԽՈՒՄԲԸ ԻՐԱՆՈՒՄ

Իրանի Իսլամական Հանրապետությունում տեղական մարմին ստեղծելու հնարավորությունները ուսումնասիրելու նպատակով երկօրյա այցով Իրան է մեկնել «Հայաստան» համահայկական հիմնադրամի աշխատանքային խումբը՝ գործադիր տնօրենի պաշտոնակատար Արա Վարդանյանի գլխավորությամբ: Աշխատանքային խումբը հանդիպումներ կունենա Իրանում ՀՀ դեսպան Կարեն Նազարյանի, Թեհրանի թեմի առաջնորդ Սեպուհ արք. Սարգսյանի եւ Թեհրանի «Արարատ» մարզավանի ղեկավարության հետ:

Իրանում ներկայումս բնակվում է շուրջ 100 000 հայ: Տարեսկզբին հիմնադրամը Մեղրու շրջանի Շվահիձոր, Ալվանք եւ Նռնաձոր գյուղերում իրականացրել է ծրագրեր իրանահայության հովանավորությամբ: Արա Վարդանյանի համոզմամբ, Իրանում տեղական մարմնի հիմնումը մեծապես կնպաստի տեղի հայ համայնքի եւ հիմնադրամի համագործակցության ամրապնդմանը:

ԿՈՐԵԼ Է ԱՏԵՓԱՆ ԶԱՇՈՒՄՅԱՆԻ ԱՃՅՈՒՆԸ

Բաքվում 26 կոմիսարների հուշահամալիրի տարածքում իրականացվող պեղումների ընթացքում հայտնաբերվել է միայն 23 աճյուն: Գերեզմանում, մասնավորապես, չկա Բաքվի ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Ստեփան Շահումյանի աճյունը: Բաքվի կոմիսարների աճյունները քաղաքային գերեզմանատներից որեւէ մեկը տեղափոխելու որոշումը ընդունվել էր անցած տարվա ամռանը: Արբեջանցի պատգամավոր Նասիբ Նասիբլին, մեկնաբանելով այդ սենսացիոն հաղորդագրությունը, հիշեցրել է անցած դարի 80-ական թվականների կեսի հրապարակումները, որոնցում խոսվում էր, թե անգլիացիները գնդակահարել են ոչ բոլոր կոմիսարներին: «Մասնավորապես, չեն գնդակահարվել Ստեփան Շահումյանը եւ մի քանի ուրիշ հայեր. նրանք տեղափոխվել են Հնդկաստան, որն այն ժամանակ Մեծ Բրիտանիայի գաղութն էր, եւ վախճանվել են այնտեղ իրենց մահով», հայտարարել է պատգամավորը: Սակայն պատմաբանները եւ Բաքվի կոմիսարների հարազատները այդ վարկածը անճշմարտանման են համարում: «Դա մի լեգենդ է, որ ի հայտ է եկել հայ-ադրբեջանական հակամարտության ժամանակ», հայտարարել է ՌԳԱ Արևելագիտության ինստիտուտի հնդկական հետազոտությունների կենտրոնի ղեկավար, Բաքվի ժողկոմխորհի նախագահի թոռնուհի Տատյանա Շահումյանը: «Զբաղվելով այդ

վարկածի հետազոտությամբ պատմաբանները, մասնավորաբար արեւելագետ-հնդկագետ Լեոնիդ Միտրոխինը, ապացուցել են, որ ընդհանուր ոչինչ չունի իրականության հետ»: «Ստալինը ատում էր պապիս: Իսկ 1937-1938 թվականների բռնությունների շրջանում Ադրբեջանի կոմկուսի կենտրոնի այն ժամանակվա քարտուղար Բադիրովը Մոսկվա էր գալիս, պահանջելով բռնադատել մեր ընտանիքին, որին փորձում էին ներկայացնել որպես ադրբեջանական ժողովրդի թշնամիների: Երկրորդ ժամանակաշրջանը, երբ աճյունների հետ կարող էր ինչ-որ բան կատարվել, հայ-ադրբեջանական հակամարտության սրումն էր 80-ական թվականներին», նշել է Տատյանա Շահունյանը, հաղորդում է «Նոյյան տապանը»:

ՄՓՅՈՒՌԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՒՄԱՐԵՑ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՏՅԱՆԻ ՆԻՍՏԸ

Հայաստանի Կառավարության 2008-ի դեկտեմբերի 25-ի որոշմամբ ստեղծվել է ՀՀ սփյուռքի նախարարությանը կից ատյան (կոլեգիա), որի անդրամիկ նիստը կայացավ երեկ:



ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը բացելով նիստը նշեց, որ ատյանի կազմում ընդգրկված են հեղինակավոր եւ ճանաչված 28 անհատներ Հայաստանից եւ 8-ը՝ սփյուռքից, որոնց էլ նախապես ուղարկվել է նախարարության գործունեության 2009-ի ծրագիր-ժամանակացույցը: Նախարարը նշեց, որ սփյուռքահայերին ընդգրկելով՝ հնարավորություն է ընձեռվում աշխարհի բոլոր անկյուններում գտնվող հայերի խնդիրներն ու հոգսերը համատեղ քննարկելու եւ լուծումներ գտնելու: Արդեն իսկ ստեղծված նախարարության համացանցի միջոցով քննարկվող հարցերի վերաբերյալ կարծիքները, առաջարկություններն ու դիտողությունները կստացվեն ու հաշվի կառնվեն:

Կոլեգիայի օրակարգում ընդգրկված էր 8 հարց: Նախարարության այս տարվա ծրագիր-ժամանակացույցը ներկայացրեց աշխատակազմի ղեկավար Արտակ Ջաքարյանը , ծավալվեցին օգտակար քննարկումներ, Լատինական Ամերիկայի երկրների հայ համայնքների կրթամշակութային խնդիրների լուծմանն ու Վրաստանի հայ համայնքի գործունեության զարգացմանն աջակցելու ծրագրեր: Նախարար Հրանուշ Հակոբյանը տեղեկացրեց, որ ,մեր սփյուռքի գործընկերներից, որոնք արդեն ուղարկել են մեզ պատասխան, որեւէ առաջարկ չունեն այսօր քննարկվող հարցերի կապակցությամբ, նրանք են» պարոններ Սկրտիչ Սկրտչյանը, Հարութ Սասունյանը, Վահե Կարապետյանը, Սամվել Կարապետյանը եւ Արա Աբրահամյանը:

Կոլեգիայի նիստում քննարկվեցին մի շարք հայեցակարգերի մշակումների կիրառման հարցեր: Նիստի նպատակն է « օժանդակել նախարարության

գործունեության ռազմավարական պլանավորման, քաղաքական որոշումների ընդունման, համահայկական ծրագրերի մշակման գործընթացներին, ինչպես նաեւ մշակել եւ ներկայացնել նախարարության կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ:

Անդրամիկ կոլեգիայի նիստում որոշվեց ամեն ամսվա վերջին ուրբաթ օրը հավաքվել եւ քննարկել առաջադրված ու ընթացիկ ծրագրերը:

Երեկոյան Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատանը ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանին հանձնվեց Ֆրանսիայի Հանրապետության Արժանիքի համարե ազգային շքանշանը, դեսպան Սերժ Սմետսկի ձեռամբ:

Կ. Ղազինյանը նշանակվել է ՇՇ արտաքին գործերի նախարարի տեղակալ

ԵՐԵՎԱՆ, 21 ՓԵՏՐՎԱՐԻ, ԱՐՄԵՆԴՐԵՍ: ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը փետրվարի 20-ին հրամանագիր է ստորագրել Կարինե Ղազինյանին Գերմանիայի Ղաշնային Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպանի պարտականություններից ազատելու մասին: Հանրապետության նախագահի նույն օրվա մեկ այլ հրամանագրով, Կարինե Ղազինյանը նշանակվել է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ:

Նախորդ տարի Հայաստան է ժամանել 558 հազար զբոսաշրջիկ

ԵՐԵՎԱՆ, 20 ՓԵՏՐՎԱՐԻ, ԱՐՄԵՆԴՐԵՍ: Նախորդ տարի Հայաստան է ժամանել 558 հազար զբոսաշրջիկ, որը 9,4 տոկոսով ավելի է 2007-ի համեմատ: Այսօր հրավիրված մանլո ասուլիսում այս տվյալները ներկայացարեց Հայաստանի զբոսաշրջության եւ տարածքային զարգացման վարչության պետ Մեխակ Ապրեսյանը՝ միաժամանակ ավելացնելով, որ աճի տեմպի նվազում է արձանագրվել: Օրինակ՝ 2007-ին՝ 2006-ի նկատմամբ, զբոսաշրջիկների այցելության աճը կազմել էր շուրջ 35 տոկոս: «Նվազման միտում է արձանագրվում ողջ աշխարհում, որը կապված է համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետ: Չնայած դրա առկայությանը՝ Հայաստանը շարունակելու է իրականացնել այս ոլորտում իր ակտիվ քաղաքականությունը: Ամեն ինչ անելու ենք՝ հասնելու համար մեր առջեւ դրված խնդիրների լուծմանը, զբոսաշրջության զարգացման նոր հայեցակարգով նախատեսված՝ մարկետինգային քաղաքականություն իրականացնելուն», - ասաց նա:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում նշվել է Սրբոց Վարդանանց տոնը

ԷՋՄԻԱՍԾԻՆ, 19 ՓԵՏՐՎԱՐԻ, ԱՐՄԵՆԴՐԵՍ: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում այսօր մեծ շուքով նշվել է Ս. Վարդանանց տոնը, որի առիթով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի համդիսապետությամբ Մայր Տաճարում մատուցվել է Ս. Պատարագ: Պատարագիչն է եղել Գեւորգյան հոգևոր ճեմարանի տեսուչ Սահակ Եպիսկոպոս Մաշալյանը: Ինչպես «Արմենպրես»-ին հայտնեցին Մայր Աթոռի

մանլո դիվանից, Սրբազան Հայրն անդրադարձել է մեր ժողովրդի եւ Եկեղեցու կյանքում Ավարայրի ճակատամարտի նշանակությանը եւ նրա քրիստոնեական ընկալմանը: «Մենք երախտապարտ ենք Վարդանանց հերոսներին եւ նրանց նման բյուր նահատակներին, որովհետեւ եթե նրանք այդ քաջությունը չունենային, ապա մենք էլ չէինք լինի այսօր, հայի անունը չէր լինի այս աշխարհում»,- ասաց Սրբազան Հայրը:

Հայ Առաքելական Եկեղեցու ընկալյալ ավանդության համաձայն՝ Ս. Վարդանանց տոնը նաեւ Ամենայն Հայոց կաթողիկոսի անվանակոչության օրն է: Պատարագիչ Սահակ Սրբազանը հոգեւորականների եւ ներկա բազում հավատացյալների անունից ջերմորեն շնորհավորել է Վեհափառ Հայրապետին այս առիթով՝ մաղթելով քաջառողջ կյանքի երկար օրեր եւ անսասան հովվապետական գավազան: Սրբազան Հայրն ուրախությամբ է արձանագրել, որ Նորին Սրբության գահակալության օրոք յուրովի վերագարթոնք է ապրում Հայ Եկեղեցին եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

ԳԼԵՆԴԵՅԼՈՒՄ ԱՆԱՐԳ ՇԱՐՁԱԿՈՒՄ ԱԶԱՏ ԵՎ ԱՐԴԱՐ ԽՈՍԹԻ ՈՒ ԿԱՐԾԻՔԻ ՎՐԱ...

Ազգ-31/01/09 - Անցյալ երկուշաբթի, երեկոյան ժամը 8.30-ին (Լոս Անջելեսի ժամանակով), երբ ուղիղ եթերով կապվել էինք Գլենդեյլի «284 Ալիք»-ով Ելույթ ունեցող Սարգիս Գըլյանի հաղորդմանը, բացահայտելով, որպես մեզ ուղղված հարցի պատասխան, մի շարք «ընդդիմադիր» ղեկավարիկների դրամաշրթունները, դրամահավաքները, հայրենադավ գործունեությունը, որոնք Լոս Անջելեսի AMGA-ի հեռուստակայանը վերածել են մայր հայրենիքի ու պետության դեմ թունավոր քարոզչության, Հայաստանը Եվրոխորհրդում ձայնի իրավունքից զրկելու, ներքին աթոռակռվի, Լոս Անջելեսի հայկական համայնքում բախումներ հրահրելու որջի, հանկարծ ներս են խուժում մի խումբ «ընդդիմադիրներ»՝ գլխավորությամբ Լեւոն Տեր-Պետրոսյանին աջակցող (իմա՝ պառակտող ու վարկաբեկող գրասենյակի, ակտիվիստներ Էրվարդ Կալայջյանի (AMGA-ի տնօրեն) եւ իր ընկերուհի Կարինե «Հարմոնի TV»-ի: Որովհետեւ իմ հեռախոսագրույցում իրենց անունն էր շոշափվել ճիշտ այն լեզվով, որոնց միջոցով ամիսներ շարունակ նրանք պահանջում էին մեզանից, հեռուստալրագրողներից՝ ինձ, Ռուդիկ Յովսեփյանին, Անահիտ Մարտիրոսյանին, Կարո Կարապետյանին, Արմեն Բարսեղյանին, սկանդալներ, անվերջ պարսավանք, հայիոյանքներ տեղացնել Հայաստանի իշխանությունների հասցեին, պատճառաբանելով մարտի 1-ի դեպքերը, ձերբակալությունները, քաղաքական հալածանքները եւ այլն: Իսկ այժմ, երբ բոլորիս աչքերը բացվել են եւ մերժել էինք ներքաշվել հայրենադավության եւ հայրենիքի վարկաբեկման պրոցեսում՝ բացահայտելով այս «փրկիչների» շարժման իսկական տերերին ու նպատակները, երկու ելույթներ էինք ունեցել Սարգիս Գըլյանի հայցումներով՝ որպես տարբեր քաղաքական հայացքների տեր անձինք՝ որոնց նպատակն է օգնել

մայր հայրենիքին սփյուռքի եւ հայրենիքի ազնիվ մարդկանց օժանդակությամբ:

Հեռուստահաղորդումը այդ ընթացքում մի քանի րոպե կանգ առավ, երբ «284 Ալիք»-ի տնօրեն Վրեժ Աղաջանյանը դուրս հանեց ներխուժողներին, որոնց այնուամենայնիվ հաջողվեց Էկրանով մի հայտարարություն անել սպառնալիքների տարափի տակ, թե իմ խոսքերը չեն համապատասխանում իրականությանը: Այս մարդիկ, որ արդեն ամիսներ շարունակ ամբաստանում էին Հայաստանի ղեկավարությանը այլախոհությունը չհանդուրժելու, ազատ կարծիքը խափանելու եւ ընդդիմադիրներին լռեցնելու մեջ, այժմ հեռավոր Գլենդեյլում, ամեն կարգի ստոր միջոցների են դիմում իրենց խայտառակ գործունեությունը բացահայտողների դեմ, վճարվելով զանազան մութ աղբյուրներից: Նպատակը՝ մի «գունավոր» հեղափոխություն էլ պատրաստել Հայաստանում, մեր գործերը դուրս հանել Արցախի իրանամերձ սահմանային տարածքներից, իսկ ռուսական գործերը՝ Հայաստանից:

Որպես ավելի քան 8 ամիս ԱՄՆ-ում Լեւոն Տեր-Պետրոսյանին աջակցման գրասենյակի անդամ, մի շարք ժողովրդային ցույցերի մասնակից ու ճառախոս, հեռուստամարաթոնների մասնակից ու կազմակերպիչ (Արման Բաբաջանյանի բանտից ուղարկած գրավոր խնդրանքով (...), որպես 450 հաղորդման հեղինակ, ես, որպես իրենց «պոտենցիալ մրցակից», «անհասկանալի» պատճառներով դուրս էի չպարտվել գրասենյակից, որովհետեւ երեւի շատ բան էի իմացել այդ հայրենադավ խմբակի գործունեության մասին:

Մինչ այդ, մեր սիրելի հեռուստադիտողներից ոմանք, շատ լուրջ մարդիկ, պետական եւ քաղաքական շատ ու շատ գործիչներ, ներկայացրել էին փաստաթղթեր, տեղեկություններ, անժխտելի փաստեր եւ իրականություններ՝ Էմիլյա եւ Արման Բաբաջանյանների, Արմեն Բարսեղյանի («Ախաբարաշենում» ծնված «Կոնդի բոշա»), Սարգիս Թադեւոսյանի (Արաբոյի Սաքո), Արմեն Կակաչյանի («Կակաչ»), Դավիթ Շահնազարյանի ու իր «պաշտպանյալ» Ռուդիկ Յովսեփյանի, Էրվարդ Կալայջյանի ու Կարինե «Հարմոնի TV»-ի, Նաիրա-«սկանդալներ»-ի, Յովհաննես Բալայանի («Քաջ Նազար») եւ այլոց գործունեության մասին, որոնք վճարվել, ֆինանսավորվել, ֆինանսավորել են մութ եւ կասկածելի աղբյուրներից՝ իբր թե ստեղծելու «դեմոկրատիա» եւ «արդարություն» Հայաստանում: «Ձմեռ պապի» դիմակով հանդես եկող Յովհաննես Բալայան-«Քաջ Նազարը» իբր թե Խարբերդի մանկատանը օգնելու պատրվակով հանգանակել է ավելի քան 400.000 դոլարի գումար վերջին երկու տարում՝ հարուցելով նույնիսկ Լոս Անջելեսում ապրող Լեւոն Տեր-Պետրոսյանի մերձավորների կասկածները: Եվ արդեն, ըստ ձեռքի տակ գտնվող փաստերի եւ

տեղեկությունների՝ 175 միլիոն դոլարի գումարներ են ուղարկվել ԱՄՆ-ի մի շարք կազմակերպություններից Հայաստանում իշխանափոխություն հաջողացնելու համար: Այս բոլորը պատճառ էին դարձել, որ ես «անցնեմ Ռուբիկոնը» եւ հայտարարեմ թե՛ այո՛, ես ընդդիմադիր եմ, բայց ոչ հայրենադավ:

Այժմ, արդարացնելու համար իրենց արարքները, ժողովրդի աչքին «մաքուր» երեւալու համար, այդ քաղաքական ստահակների խմբակը ամենօրյա «դեղին» քարոզչություն է ծավալում մոլորեցնելու համար բոլորին, լռեցնելու համար ինձ նման մարդկանց: Բայց արդեն ոչ ոք նրանց չի հավատում. կեղտը ջրի երեսն է ելել...

ՀԱՍՏ ՄՈՍԿՈՅՅԱՆ, Հանուվեր, Գերմանիա

«Բջնի» աճուրդային գործընթացն ավարտվել է

ԵՐԵՎԱՆ, 19 ՓԵՏՐՎԱՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Այսօր՝ «Բջնի» հանքային ջրերի գործարան» ընկերության գույքի եւ գույքային իրավունքների օտարման կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտմանը հաջորդող երրորդ օրը, գնորդը մուծել է լոտի արժեքի ամբողջ գումարը: Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ արդարադատության նախարարության Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից, բացի նախավճարի տեսքով փետրվարի 16-ին մուծված 222 միլիոն 68 հազար դրամից՝ ԴԱՀԿ ծառայությանը վճարվել է եւս 4 միլիարդ 219 միլիոն 432 հազար դրամ:

Հայկական հնագույն մշակույթը կներկայացվի Թուրքիայում եւ Թուրքմենստանում հրավիրվելիք միջազգային գիտաժողովներում

ԵՐԵՎԱՆ, 18 ՓԵՏՐՎԱՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ մշակույթի նախարարության պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնն այս տարի պետական հովանավորությամբ հնագիտական պեղումներ կիրականացնի Շենգավիթ քաղաքատեղիում: Այն երեսանի տարածքում գտնվող հնագույն քաղաք է, պատկանում է շատ ավելի վաղ ժամանակաշրջանի, քան էրեբունին: «Մայրաքաղաքի տարածքում 6 հազարամյա հնության քաղաքատեղիի առկայությունը շատ հարցերում է պարտավորեցնում, քանի որ այն կարող է լինել զբոսաշրջության կարելուրագույն կենտրոններից, գիտական կարելուր հայտնագործությունների վայր»,- «Արմենպրես»-ի հետ զրույցում ասաց կենտրոնի տնօրեն Հակոբ Սիմոնյանը: Գիտության պետական կոմիտեն հատուկ միջոցներ է նախատեսել Շենգավիթում համալիր հետազոտությունների կատարման համար, որը կիրականացվի ամերիկացի հնագետների հետ:

Իրան

ԻՐԱՆՆ ԱՐՁԱԿԵԼ Է ԻՐ ԱՌԱՋԻՆ ԱՐԲԱՆՅԱԿԸ

Իրանը հայտարարեց, որ արձակել է իր առաջին արբանյակը, որը կրում է «Օմիդ» («Հույս») անվանումը: Արբանյակը երկրաշուրջ ուղեծիր է դուրս բերվել երեքշաբթի առավոտյան: Այդ մասին հաղորդել է Իրանի հեռուստատեսությունը:

Նաեւ հաղորդվում է, որ արբանյակն ուղեծիր է դուրս բերվել իրանական «Սաֆիր» («Դեսպանորդ») մղիչ հրթիռով:

Արբանյակի արձակումը հարմարեցված էր Իսլամական հեղափոխության 30-ամյակին: Իրանի հեռուստատեսության տեղեկությունների համաձայն, արբանյակն արձակվել է անձամբ նախագահ Մահմուդ Ահմադինեժադի կարգադրությամբ:

«Օմիդը» իրանցի մասնագետների մշակած էլ իրանական մղիչ հրթիռով ուղեծիր դուրս բերված առաջին արբանյակն է: Բայց պաշտոնապես իրանական առաջին արբանյակ է համարվում Ռուսաստանում մշակված եւ 2005-ին Պլեսեցկի տիեզերադաշտից «Կոսմոս-3Մ» մղիչ հրթիռով արձակված «Շահ-1» արբանյակը:

2008-ի օգոստոսի 16-ին լրատվական գործակալություններն արդեն հաղորդել էին «Սաֆիր» մղիչ հրթիռով «Օմիդ» արբանյակի արձակման մասին, բայց մի քանի ժամ անց Իրանի պաշտպանության եւ զինված ուժերի թիկունքային ապահովման նախարարությունը հայտարարել էր, որ ուղեծիր է դուրս բերվել ոչ թե բուն արբանյակը, այլ դրա մակետը: Դրանից հետո ԱՄՆ պաշտպանության նախարարության ներկայացուցիչներն ասել էին, որ արբանյակի մակետը ուղեծիր դուրս բերելու իրանցիների փորձը ձախողվել է:

Իրանը եւ Աֆղանստանը համատեղ ներդրումներ կկատարեն Իրան-Աֆղանստան-Տաջիկստան երկաթուղու զարգացման բնագավառում

ՔԱԲՈՒԼ, 20 ՓԵՏՐՎԱՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Իրանի առաջին փոխնախագահ Փարվիզ Դավուդին հինգշաբթի օրը Քարուլում հանդիպում է ունեցել Աֆղանստանի նախագահ Համիդ Քարզայի հետ: Հանդիպման ընթացքում Դավուդին հայտարարել է, որ իր երկիրը շահագրգռված է մինչեւ Տաջիկստան ձգվող Խավաֆ-Հիրաթ-Մենե երկաթուղու շինարարության հարցում:

Ռուսաստանը Ադրբեջանին եւ Իրանին ներկայացրել է Աստարա-Դազվին երկաթուղու նախագծի վերջնական տեխնիկա-տնտեսական հիմնավորումը

ԲԱԶՈՒ, 20 ՓԵՏՐՎԱՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Ռուսաստանի երկաթուղիներ» բաց բաժնետիրական ընկերությունը պատրաստել է «Հյուսիս-Հարավ» միջազգային փոխադրամիջանցքի շրջանակներում Աստարա (Ադրբեջան)-Աստարա (Իրան)-Ռեշտ-Դազվին երկաթուղու նախագծի իրացման տեխնիկա-տնտեսական հիմնավորման վերջնական տարբերակը եւ ներկայացրել ադրբեջանական եւ իրանական կողմերին: Այդ մասին հայտնել է Ադրբեջանի պետական երկաթուղու պետ Արիֆ Ասքերովը:

Իրանը ձեռնամուխ է լինում նոր անօդաչու ինքնաթիռների արտադրությանը

ԹԵՀՐԱՆ, 18 ՓԵՏՐՎԱՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Իրանը ձեռնամուխ է լինում նոր անօդաչու ինքնաթիռների արտադրությանը, որոնք կարող են անցնել 1000 կիլոմետր տարածություն: Այդ մասին, ինչպես հաղորդել է իրանական «Ֆարս» լրատվական գործակալությունը, հայտնել է երկրի պաշտպանության փոխնախարար Ահմեդ Վահիդին:

Խոհեր

Մեր անցած ճամբան

գ- Մասշեղ Սուլեյման – Մաս բ

Թ. Ղարախանյան Միտակցի

ՀԱՍՏԱՐԱՎՈՒԹՅԱՆ ՂԱՍԱԿԱՐԳԵՐԸ.


1-Senior Staff; Առաջին կարգի խավ: Բարձր գրագետ – պարսկերեն ՄԻՐՁԱ, իհարկե տեղիս կառավարական պաշտոնյանները նույն բարձրակարգ հնարավորություններից էին օգտվում:

Բարձր աստիճան Գրագետների ղասակարգ «Senior»-ները, որ ապրում էին հատ ու կենդ ՄԵՅԴԱՆ անունով առանձին շրջանում և վերջին տարիներին նոր ջրջան ՆԱՖՏԱԿ անունով կառուցեցին իրենց համար. Այս ղասակարգը ուներ 4-5 սենյականոց տուն որի հետևի մասը ուներ իրենց կից ծառայողների բաժին: Բարձր կարգի բժիշկները այս խավին էին պատկանում:

2-Junior Staff; Երկրորդ խավ: Միջին կարգի խավ:

Այս Գրագետների խավը ապրում էր ՄԵՅԴԱՆ անունով շրջանի մեջ, բայց փողոցները տարբերվում էին Բարձր կարգի գրագետներից: Նաև հասարակ կարգի բժիշկները այս խավին էին պատկանում:

3-Skilled Labour. Երրորդ ղասակարգ; որոնց համար Նաֆտային Ընկերությունը 2 կամ 3 սենյականոց բնակարաններ էր կառուցել և նրանք ապրում էին գրագետներից ավելի հեռու շրջաններում որոնք էին ՆԱՖՏՈՒՆ, ՉԵՇՄԵ ԱԼԻ, ՍԻ ԲԵՐԵՆՋ, ԲԻԲԻԱՆ և ԹԵՄԲԻ կոչված շրջանները:



Մասշեղ Սուլեյման

4- Labour: Չորրորդ ղասակարգ: որոնք Նաֆտ. Ընկերության բանվորական ամենացածր խավն էր և գրեթե 80 տոկոսը գյուղերից եկած հայեր էին և ապրում էին Փօշտ Քուհ կոչված տեղում: Նույն ղասակարգի Պարսիկ բանվորները ապրում էին Բազարի շրջանում կամ ՔԱԼԳԵՅ կոչված մեծ թվով օտար պարսիկ ընտանիքների շրջանում, որ Փոշտ Քուհ-ի ձորի հարավային կողմում էին և բոլորովին հեռու հայկական շրջանից:

5-Բազարի շրջան, որ կազմում էր 99.9 տոկոսը պարսիկ եւ հատ ու կենտ հայ խանութայանները ընդհանրապես մանրավաճառներ, օրինակ՝ օղի ծախող, կօշկակար, դերձակ և այլն:

Ոչ-բանվորների այսինքն գրագետների «Junior, Senior»-ների առավորական կենտրոնները յուրահատուկ խանութներ էին, որ միայն իրենք և իրենց ընտանիքները իրավունք ունեին ներս մտնելու, նմանապես իրենց ակունքներն էլ իրենց ապրած շրջանում էր, նույնիսկ

«Senior» գրագետների վաճառատները և ակունքներն էլ ավելի բարձր կարգի էին որտեղ միայն «Senior»-ները իրավունք ունեին ներս մտնելու, բայց «Senior»-ի և «Junior»-ի սինեմաի սրահը նույնն էր և միայն իրենք իրավունք ունեին օգտվելու: Այս վիճակը շատ նման էր սեւամորթների ստրկական ժամանակաշրջանին:

Անձամբ վկա եմ եղել որ գրագետների հացի մեքենան Փօշտ Քուհ-ի փողոցից անցավ միայն բլուրի փեշին մի գրագետի տունը՝ ՅՈՒՇԻԱՐ ՆԵԺԱԴ՝ անունով հաց հանձնելու: Գրագետների հացի մեքենան այդ եվրոպական հացից էր եկել բաժանելու եւ երբ վերջացրեց եվ պատրաստվում էր հեռանալ, փոքր քույրիկս լացելով մորիցս մեկ թունամանոց կապույտ գույնի փող առավ և վագեց հացի մեքենայի վարորդին դրամ տալով ասաց «խառնե՛ք միքոնամ յե նուն բեխարամ ինամ փուլեշ» և մեկ թունամանոցը երկարացրեց դեպի վարորդը, բայց սրտածնվիկ դեպքը տեսա և լսեցի պարսիկ վարորդին ինչպես երկու անգամ կրկնեց «Բորո բաչե քարեզար, ին մալե քԱՐՄԱՆԴԱ-Ս, Բորո»:

Բանվոր ղասակարգի զավակների դպրոց գնալու բեռնատար մեքենայի հետևի մասը ծածկված էր և մենք փայտե աթոռների վրա էինք նստում որ պատուհան չուներ եւ վրանի նման կոշտ կտորով ծածկված էր, բայց գրագետների երեխաների դպրոցի մեքենան ավտոբուս էր, փափուկ աթոռներով և պարզ պատուհաններով:

Նման դեպքերն էին որ տարիների ընթացքում կուտակվելով բանվոր և իդեալիստ մարդկանց սրտերի մեջ, ձախակողմյան շարժումներին համակիր դարձին:

Բանվոր մարդիկ Նաֆտ. ընկերության տված 15 օրեա «company ration»-ով էին ապրում. դա շատ նման էր այս օրերի food stamp-ին, ամեն բանվորի ընտանիքի չափը նույն չափի ուտեստեղեն էր, օրինակ՝ բրինձ, ոսպ, լոբի, յուղ, ալյուր, սառույցի կտրոն և այլն, բայց օտար ուտելիքները բազարից էին առնում, իսկ ամառվա սառույցի չափը շատ քիչ էր: Ամռան առավոտները նախքան արևածագը, բանվորը քայլում էր դեպի սառույցի գործարան, բազարի սկիզբը և իրեն տրված կտրոնը հանձնում սառույց բաժանողին և այդ օրվա քառորդ դալիբ սառույցը «30x 30 սանթիմետր» առնում. փաթաթում էր գունդի մեջ եւ տուն բերում ներփակում մի փոքր փայտե տուփի մեջ որտեղ ուտելիքները շարուն էին սառույցի վրա. գրեթե այս օրերի սառնարանի նման: Խմելու ջուրը կավից պատրաստված կուժի մեջ էր պահվում, որին պարսկերենով «ՀՈՐԲԱՆԵ» էինք ասում և իրիկնապահին ջուր էին լցնում որ գիշերվա գովին հովանա, շորով բերանը ծածկում եւ բաժակով ջուր վերցնում եւ խմում:

Փոքրիկներին ափսոսանքով եւ կարոտով հիշում էինք գյուղական աղբյուրների սառը ջրերը եւ զովաշունչ հովը: Կաթ չկար, հուններ չկար, գառների եւ ոչխարների բառաչ չկար: Բայց կար աշխատանք որ ընտանիքի մարդը պարզ երեսով ամեն 15 օր վարձի սրճագույն ծրարը պարծանքով բացում էր իր ընտանիքի առաջ եւ ազնիվ աշխատանքի արդյունքը ցուցադրում իր կնոջ եւ պարզ ճակատով գրուցում նոր գնելիքների եւ պարտքերի մասին: Այդքան որ այդ տեսարանի գրույցներից է հիշվում նոր ծրագրերի մասին ասելիք չկար, միայն պարտքերը ծածկելու, տան վարձը վճարել, երեխաների դպրոցի թոշակը վճարելու մասին խոսք կար: Գրեթե հազվիվ խոսվում էր երեխաների կոշիկ կամ շորերի հաշվի մասի, որ պիտի ՋԱԿԻԴ-ի կամ ԱՄԻՆԻ՝ բազարի

խանութներից պարտքով վերցնեին եւ մինչեւ մյուս վարձին վճարեին:

Գոնե տարին մի 2-3 անգամ խոսվում էր տոների առթիվ 'ՆԱՆԱ ՅՈՒՇԱՆԳ' պարսիկ կնոջ "յուխա" թխելու վարձի և շաքարի ու ընկույզի ծախսերի մասին, ընդհանրապես դասավորում եւ թխում էին այդ համեղ յուխան:

Անգլո-իրանյան Նաֆտ. ընկերության դասակարգային խտրականությունների բերումով բանվորներն ու գրագետները տարբեր շրջաններում էին ապրում եվ իրար հետ ընտանեկան հարաբերությունն չունեին, հարազատը հարազատից կտրվում էր :

Շար. 4

Մշակույթ

**ԳԻՏԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ
ՐԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Յեյ մարդ, Տերը ինչ կասի կանես,
Մարդ ես ծնվել, վերջում մարդ էլ կմեկնես,
Այս ունայն աշխարհում գանձը ի՞նչ կանես,
Գալիս ու գնում եմ վաղ առավոտին:

Առավել ընդգծելով Քուչակի մեծությանը նա ներկայացրեց նաև 2003 թվականին տպագրած իր «Հայ աշուղական գրականության պատմություն» գրքում շարադրված խրիմյան Հայրիկի գրառած ավանդությունից մի հատված՝ Քուչակի վերաբերյալ. «Վանեն ոչ հեռի՝ դեպի արևմուտք գյուղ մը կա՝ Խառակոնիս կրսեն: Գյուղին մեջն ալ եկեղեցի մը՝ սուրբ Թեոդորոս: Եկեղեցու հիմեն քիչ մը հեռի կը գտնվի Քուչակի գերեզման, ուր գյուղացիներ ուխտի կերթան: Գյուղի ծերունիներ կպատմեն, թե զվարճաբան մարդ մը եղած է Քուչակ: Մոտակա գյուղերեն կկանչեն եղբր զինքը հարսնիք: Քուչակն էլ կառնե եղբր իր քյաման ու կերթա: Անգամ ալ, գյուղի մը չհասած՝ գայլեր զինք կպաշարեն: Քուչակ արագությամբ կելնե ծառի մը գլուխ՝ անուշ կնվագե: Իսկ գայլեր՝, գայլեր՝ ծառին բոլորտիք շարված լուռ մտիկ կընեն...»:

Աշուղագետի հայտնագործությունների թվում էր նաև ավելի ուշ շրջանի մեր թրքախոս ու թրքագիր երևելի աշուղը՝ **Քեշիշ Օղլի Դավիթը**, որը Բորչալուի գավառի Շամշուղա գյուղացի, երկու տարեկանից կուրացած և Ախքյորայի գյուղում հասակ առած հայ երևելի աշուղներից մեկն է, որին բարձր է գնահատել ինքը՝ Խաչատուր Աբովյանն իր «Վերք Հայաստանի» վեպի «Հառաչաբանուն», մասնավորապես նշելով. «...լավ գիտեի, որ թե օսմանլի, թե ղզլբաշի երկրումը՝ ինչքան էնպես երևելի, խելոք, հունարով մարդ եմ եղել, շատը հայ ա եղել: Մենակ Քեշիշ Օղլին բավական է, որ ասածս սուտ չի դուս գա»:

Ահա մի քառյակ Քեշիշ Օղլու «Լուս աշխարհ» ստեղծագործությունից.

Տանել, դիմանալ, համբերել է պետք,
Կյանքը ծանր խաչ է, որ կրել է պետք,
Վեհ անուն փնտրել ու գտնել է պետք,
Չար ու նախանձ մարդկանց հետը գործ չունեն:

Անդրադառնալով այսօրվան աշուղագետը հավաստեց, որ այսօր էլ մեր ժողովուրդն ստեղծագործում է նույնքան սուր ու դիպուկ, որքան տասնամյակներ ու դարեր առաջ, օրինակ բերելով Ապարանի շրջանի Ղազնավար (Արագած) գյուղի մշակույթի այժմյան տան տնօրեն Ժորա Գրիգորյանի հայ նշաանավոր աշուղ Բաղդասարի ծոռան ստեղծագործությունից՝

Բոբիկ ջուրը մի մտնի, բոբիկ ջուրը մի մտնի
Փուշ կմտնի ոտդ յար ջան, կանե յաման յարա:

Ի մի բերելով բոլոր պատմական փաստարկները, Գրիգորյանը ներկայացրեց մինչ այժմ հայտնաբերված միակ ռեալ արժեք ունեցող մի վավերագիր, որում արձանագրված էր 1277 թվականի մայիսի 14-ից ողջ Անատոլիում գործածված Քարամանօղլիների Իկոնյան աշխարհի սուլթան Սեմեդդին Մուհամմեդ 1-ինի հրամանն այն մասին, որ «այսուհետ պետական ատյաններում, ժողովարաններում, հավաքատեղիներում, հրապարակներում և այլուր թուրքերենից բացի ուրիշ լեզու գործածել չի թույլատրվում...» և ցավով նշեց, որ նույն այդ հրամանագրի ուղղակի հևանքներն են մեր դար ու դաշտերին, բերդ-ամրոցներին և նույնիսկ սրբավայրերին դաջված անունները՝ Ղարաբաղ-Ղարադաղ, Արմալու- Արտմլու, Օրդակլու-Դավալու և այլն, մարդկանց անուն-ազգանունները՝ Սայադ, Ֆարիադ, Ռաշիդ, Յուզբաշյան, Ուզունյան և այլն: Ահա թե ինչու 15-19-րդ դարերի հայ գրեթե բոլոր աշուղների ոչ միայն անունները, այլև պատմած հեքիաթներն ու ասքերը և անգամ կատարած երգերն էլ ըստ նույն հրամանագրի լինելու էր նույն այդ թուրքերենը: Հաշվի առնելով այս ամենը, աշուղագետը հորդորեց, որ պետք է յուրովի ընկալել և նաև գնահատել մեր գրականության մեծերի՝ Խ. Աբովյանի, Ռ. Պատկանյանի, Ղ. Աղայանի և այլոց և՛ վերաբերմունքը և՛ նույնիսկ պահվածքը թուրքերեն ստեղծագործած մեր աշուղների նկատմամբ:

Վերջում գրականագետը հիշեցրեց մեծն Կոմիտասի պատգամը. «**Ժողովուրդն է ամենամեծ ստեղծագործողը, գնացեք և սովորեք նրանից**», միաժամանակ կոչ արեց բոլորին արժեվորել և ըստ արժանվույն գնահատել Անի, Աղթամար, Գառնի, Զվարթնոց, Տաթև կառուցած և նաև «Կռունկ», «Ծիրանի ծառ», Հորովել», «Դլե յաման» ստեղծած հայ շարքային մարդուն և չգրկել նրան իր էթնիկական և նաև Աստու կամեցողությամբ պարզևած շնորհից:

*Լրագրեց՝ «Լույս»-ի աշխատակից
Գայանե Արզարյանը
Շար. 2 եւ վերջ*

Ցավակցական

«Լույս» ամսագրի խմբագրական կազմը, իր խորին ցավակցությունն է հայտնում սիրելի ընկեր Սիմոն Խաչատրյանին, իր գավակներին և հարազատներին, իրենց կրած ծանր և անփոխարինելի կորստի՝

Ռիմա Խաչատրյանի

ցավալի մահվան առիթով: